

Հայտարարություն ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի (ծածկագիր 3.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոն գրադեցնելու նպատակով մրցույթ անցկացնելու մասին

15.08.2019

Տիպ՝ [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու՝ Ջրառատ համայնքի ղեկավար

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարան «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ հետևյալ համայնքային ծառայության թափուր պաշտոնը գրադեցնելու համար.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ (ծածկագիր 3.1-1)

- 1) Իրականացնում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառման գործառույթները,
- 2) կազմում է ֆինանսական հաշվետվությունները,
- 3) ապահովում է հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջների կատարումը,
- 4) իր լիազորությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին ու ճիշտ կազմելու համար,
- 5) կատարում է Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և Աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,
- 6) տեղեկատվություն է ներկայացնում քարտուղարին հարկերը և օրենքով սահմանված այլ վճարները չվճարող անձանց վերաբերյալ,
- 7) կազմում և քարտուղարին է ներկայացնում համայնքի բյուջեի և դրանում

փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումների նախագծեր,
8) վարում է աշխատակազմի հաշվապահական հաշվառումը,
9) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է. Առնվազն միջնակարգ կրթություն, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության եւ իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Մրցույթը կանցկացվի 2019 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 12:00-ին համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Ջրառատ, Արարատյան 8): Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան

փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի
բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-ից մինչև 18:00-ը, բացի շաբաթ,
կիրակի և մյուս ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջին
ժամկետն է՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ը, մինչև ժամը 18:00-ը:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու,
լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և
հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմ (հասցե՝ ՀՀ
Արմավիրի մարզ, գյուղ Ջրառատ Արարատյան 8 ,/ինդեքս1146/ հեռ.՝ 093541556)
կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչություն
(հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Աբովյան 71, 0901 /ինդեքս/

Հեռ.՝ +374 231/ 2-37-16, 2 42 62/

Ֆաքս՝ /+374 10/ 28 06 46

Էլեկտրոնային հասցե՝ armavir@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Ջրառատ

Հեռ.՝ +374 93541556

Էլ. փոստ՝ jrratgyux@mail. ru կամ jrrat.armavir@mta.gov.am